

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

23) Ս. Ս., Բնագիտական գրոյցներ, № 1 լառաջարան, Բագու,
1902 թ., գիշին է 20 կոպու

Այս գրքոյկը ազատ չէ այն պակասութիւններէ, որոնք
յատուկ են մեր թարգմանութիւններէ մեծ մասին. բնագրի հա-
րադատութիւնը, լեզուի ճշտութիւնը աւելորդ բան է համարուում
մեզանում, ինչպէս և, յաճախ, հեղինակի անուան տեղ թարգ-
մանչի անունն է գրքի երեսը զարդարում...

Ճիշտ է, պ. Ս. Ս. իր սեփական «յառաջարանի» մէջ, վեր-
ջում, յիշում է որ այս գրքի մէջ նա «տալիս է հոչակաւոր
բնագէտ Հիւքսլէի «Առաջնորդ բնագիտութեան» գրքոյկից մի
կտոր թարգմանութիւն»։ Բայց, միթէ մի «յառաջարան», որ,
ի դէպ է ասել, համարձակ կարելի էր և չը կցել Հիւքսլիի
գրուածքին, քանի որ այդ վերջինը ինքն հէնց ամբողջապէս՝
ճիշտ գիտութիւնների մի հրաշալի ներածութիւն է*)—միթէ,
կրկնում ենք, մի «յառաջարան» իրաւունք է տալիս գրքի
երեսը այնպէս կազմել որ թարգմանիչը հեղինակ հանդիսա-
նայ...

Բայց թողնենք այդ փոքրիկ անախառութիւնը մի կողմ,
մանաւանդ որ այդ «հեղինակը» բաւականացել է միայն իր ա-

*) Ձենք կարծում որ պ. Ս. Ս. այդ ներածութիւնը անգլիե-
րէնից թարգմանած լինի. ուսերէն մեզ յայտնի է Մ. Ա. Антонович-ի
թարգմանութիւնը. Серия первоначальных учебниковъ. Введение про-
фессора Гексли. Այդ սերիայից է և Բովկոի «Բիմիան», որ թարգմանուել է
հայերէն և հրատարակուել նախկին Հրատ. Ընկ.-ից. Անտոնովիչը յայտնի
թարգմանող է և միշտ գրքերի շապկի երեսին խոշոր տառերով տպում
է. Переводъ съ англійскаго...

նուան և ազգանունան սկզբնատառերով, և քննենք գրքոյկը անկախ այս հանգամանքից:

Հեօքսլիի Ներածութիւնը բաժանուած է երեք գլխի.

I. Բնութիւն և գիտութիւն, II Նիւթական առարկաներ և III Աննիւթ առարկաներ:

Պ. Ս. Ս. Թարգմանել է միայն առաջին գլուխը (այն էլ բաց թողնելով ամբողջ գլխի բովանդակութիւնը բնորոշող վերնագիրը): Հեօքսլիի Ներածութիւնը մի հրաշալի ամբողջութիւն է, ուր հռչակաւոր գիտնականը ընթերցողին քայլ առ քայլ տանում է յայտնիից դէպի անյայտը, սկսելով ամենատարրական հասկացողութիւնների բացատրութիւնից և հասցնելով մինչև հոգեկան բարդ երեոյթները: Սիստեմի խելացիութիւնը պարզ է:

Իսկ հայ Թարգմանիչը հարկ է համարել տալ ընթերցողին միայն այդ «ներածութեան» առաջին գլուխը և կցել դրան իր սեփական դատողութիւնները, ուր խօսւում է, ի միջի այլոց, այնպիսի բաների մասին, որոնք պարզւում են Հեօքսլիի գորուածքում միայն յետոյ (օրինակ, դիտողութիւն, փորձ և եզրակացութիւն): Մեզ թւում է որ շատ աւելի նպատակայարմար կը լինէր Ս. Ս.-ի խառնափնթոր դատողութիւնների տեղ, որոնք բոնում են 25 երես, տալ Հեօքսլիի գորուածքի նաև երկրորդ և երրորդ գլուխները, միայն, ի հարկէ, ոչ այնպիսի զարհուրելի Թարգմանութեամբ, ինչպէս կատարուած է առաջին գլուխը:

Թողնելով հետաքրքրուողներին անձամբ համեմատել ամբողջ Թարգմանութիւնը, մենք կը բաւականանք մի քանի նշմուշներ բերելով հէնց առաջին երեսներից.— Узнаемъ что нибудь о мнѣ. պ. Ս. Ս. Թարգմանել է. «նշմարում եմք որ և է բան աշխարհիս մէջ» (26 եր.). Свойства и способности, Թարգմանել է «յատկութիւններ և ոյժեր» (եր. 30), մոռանալով որ ոյժ ի հասկացողութեան մասին դիտմամբ Հեօքսլին ոչինչ չի ասում մինչև որ աստիճանաբար չի հասցնում ընթերցողին այդ հասկացողութիւնը ըմբռնելուն (երկրորդ գլխում, երես. 23, Թարգմ. Անտօնօվիչի). Способность и сила նոյնանշան գաղափարներ չեն: Առհասարակ ցերեմօնիս անել բառերի ճիշտ նշանակութիւնների կիրառութեան մէջ պ. Ս. Ս. չը գիտէ. ուստացъ узнать և воспринимать հաւասար կերպով Թարգմանել է նրամաղել և, ի հարկէ, ևրկու դէպքում էլ սխալ. свѣденіе դառել է «գիտակցութիւն» և այլն և այլն:

Գուցէ պարոնը իւր ձեռքի տակ ունեցել է ոչ Անտօնօվիչի Թարգմանութիւնը, այլ հետեւել է մի այնպիսի ողոս

Թարգմանչի, ինչպիսին է և ինքը հայ Թարգմանիչը, Բայց այդ էլ զարմանալի է. Թարգմանութիւնից Թարգմանել, այն էլ ընտրել անպատճառ վատ, անյայտ մի Թարգմանութիւն...

Լ. Ս.

24) ԼԷՕ. Ստեփանոս Նազարեանց, 1 հատոր, Քիֆլիս, երկու հատորի գինն է 1 ա. 50 կ.,

Վերջին տարիներս նկատելի է մեր գրականութեան մէջ մի առանձին հետաքրքրութիւն մեր մօտիկ անցեալով. Նոյն իսկ Միթրաբեանները, որոնք միշտ թունդ հնասէրներ էին, սկսել են իրանց օրգաններում տպել նորագոյն գրական գործիչների մասին կենսագրութիւններ և արդի գրականութեան նուիրած տեսութիւններ:

Այսպէս, «Հանդէս Ամսօրիան» տպում է բօխչկ դօկտօր Նահապետ Ռուսինեանի շատ ընդարձակ և մանրամասն կենսագրութիւնը, «Բաղմավէպը» տուաւ մի շարք յօդուածներ նուիրուած Գերովբէ Պատկանեանին, Էմինին, Գամառ-Քաթիպային, Միքայէլ Նալբանդեանին, Ստեփանոս Նազարեանին, Գրիգոր Արծրունուն, Ալիշանին և այլն. «Գեղունին» նոյնպէս յետ չէ մնում այդ հոսանքից: Սակայն այդ նոր ուղղութեան ամենաաչը ընկնող ներկայացուցիչը, գէթ ուստահայոց գրականութեան մէջ, ըստ իս, Լէօն է. Նա, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին ևս, սկսեց հայոց մատենագրութեան պատմութիւնը ոչ հին ժամանակներից, այլ միայն հայկական տպագրութեան սկզբից, XVI-րդ դարուց: Երկու հատորի մէջ նա դեռ չէ վերջացրել իր ասելիքը նոյն իսկ երեք դարի մասին: Բացի իր այդ երկու հատոր աշխատութիւնից, որի շարունակութիւնը, անշուշտ, միայն ժամանակաւորապէս է ընդհատուած, Լէօն ձեռնարկել է կենսագրութիւնների մի ամբողջ սերիայի հրատարակութեան: Այդ կենսագրութիւններից լոյս են տեսել արդէն «Յովսէֆ Կաթողիկոս Արղութեան» և «Ստեփանոս Նազարեանց»: Մենք չենք խօսում այստեղ, ի հարկէ, այն կենսագրական յօդուածների մասին, որ Լէօն գրել է «Մուրճում» և «Մշակում»:

Մեծ ճաշակով տպուած և պատկերներով զարդարուած այդ հատորիկները մի մի գեղեցիկ ծաղիկներ են մեր գրական աղբաւ ըտերանոտանում... Հեղինակի վիթխարի աշխատասիրութիւնը և ընտրած առարկայի մասին պարզ, մի և նոյն ժամանակ շատ մանրամասն գրելու ձեւը՝ դարձնում են այդ կենսա-